ՀԼ - 16'911

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«29» 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0249-23

Ձեռնարկողը՝ «ԱՐ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ք.Երևան, Ազատության պ., շ. 12/3, բն 25

Գործունեությունը՝ ***Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Սալմաստ» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
գ. Արամուս

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0249-23

«29» 12 2023թ.

Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Սալմաստ» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԱՐ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք

Ներածական մաս. Արամուսի բազալտների հանքավայրի «ՍԱԼՄԱՍՏ» տեղամասը վարչատնտեսական առումով գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան խոշորացված համայնքի վարչական տարածքում և տեղակայված է Արամուս գյուղից 1550 մ հարավ-արևելք: Տեղամասը հողածածկ է և ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է Արամուս (2.0կմ), Զովք (3.6 կմ), Ձորաղբյուր (4.4 կմ) և Կամարիս (1.7 կմ) գյուղերի, Աբովյան (6.2 կմ) և Երևան (27 կմ) քաղաքների հետ: Հայկական երկաթուղու Աբովյան կայարանը գտնվում է տեղամասից 5.7 կմ հեռավորությունների վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի շահագործման նպատակն է արտադրել շինանյութեր՝ բլոկներ և խիճ, որոնք կարող են օգտագործվել շինարարական աշխատանքների համար, հաշվի առնելով հանքաքարի ֆիզիկամեխանիկական հատկությունները: Ընկերությունը նախատեսում է հանքաքարը օգտագործել ուղիղ կտրվածքի պատքարի արտադրության համար սեփական հումքային հենք ստեղծելու նպատակով: Ընկերության տեխնիկական սարքավորումները թույլ կտան արդյունավետ կերպով իրականացնել հանքավայրի շահագործումը: Հետախուզված պաշարները տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի մարտի 17-ի թիվ 450-Ա հրամանի համաձայն 01.07.2022 թվականի դրությամբ կազմում են 877540 մ3՝ բլոկների 30.6% միջին ելքով: Պաշարները գնահատվել են B կարգով: Տարածաշրջանի ռելիեֆը մեղմ ալիքավոր է,

տեղ-տեղ բարձրանում են հրաբխային խարամային կոները: Ողջ տարածքը ծածկված է Գեղամա լեռնաշղթայի հրաբուխներից արտավիժված բազալտ-անդեզիտաբազալտային լավաներով: Լեռնազանգվածների թեք ու անտառազուրկ լանջերը կտրտված են հեղեղատներով ու ոչ խորը գետահովիտներով: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 80-ից չեն անցնում և համեմատաբար մատչելի են տնտեսական յուրացման համար: Տեղամասի բազալտներն իրենց որակական ցուցանիշներով համապատասխանում են ГОСТ 9479-2011 «Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий» տեխնիկական պահանջներին, պիտանի են երեսապատման բլոկների արդյունահանման և ճարտարապետաշինարարական իրերի արտադրության համար: Ստացված խիճն ու ավազը համապատասխանաբար բավարարում են «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95 և ԳՕՍՏ 8736-2014 «Песок для строительных работ» տեխնիկական պահանջներին և կարող են օգտագործվել որպես լցանյութ ծանր բետոնի, ճանապարհային և այլ տեսակի շինարարական աշխատանքների համար: Արամուսի բազալտների հանքավայրի «ՍԱԼՄԱՍ» տեղամասի պաշարների հաշվարկման արդյունքները՝ պաշարների հաշվարկման տարածքի մակերեսը՝ 108071 քմ, հաշվարկված պաշարները ըստ B կարգի՝ 877.54 հազ.խմ, մակաբացման ապարների ծավալը՝ 208.6 հազ. խմ, մակաբացման միջին գործակիցը հանքավայրում՝ 0.24 խմ/ խմ, օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 8.12 մ, մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 1.93 մ: Տեղամասի շահագործումը նախատեսվում է իրականացնել բացահանքով, բուլդոզեր-փխրեցուցիչի, ամբարձիչի, կոմպրեսորի և ավտոտրանսպորտի կիրառմամբ: Բլոկների պոկումը լեռնազանգվածից նախատեսվում է կատարել հորատասեպային եղանակով, առանց պայթեցման աշխատանքների: Տեղամասի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները միանգամայն բարենպաստ են այն բաց եղանակով շահագործելու համար և ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են՝

- Բացահանքի առավելագույն երկարությունը - 510.0մ,
- Բացահանքի առավելագույն լայնությունը - 265.0մ,
- Մշակվող բազալտների հաստաշերտի միջին հզորությունը – 8.12մ,
- Բացահանքի առավելագույն խորությունը - 14.2մ,
- Բացահանքի օտարման մակերեսը - 10.8հա,
- Բազալտների հաշվեկշռային պաշարները - 877540 խմ,
- Բազալտների կորզվող պաշարները - 769485 խմ,
- Մակաբացման ապարների ծավալը – 208600 խմ,
- Բացահանքի ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Հանքավայրի նախագծվող տարածքի կոորդինատներն են ARM WGS-84 կոորդինատային համակարգով՝

1. X - 4455142 Y - 8470444
2. X - 4455420 Y – 8470504

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

3. X – 4455461.8 Y – 8470537.7
4. X - 4455622 Y – 8470652
5. X – 4455531 Y – 8470798
6. X – 4455424 Y – 8470711
7. X - 4455044 Y - 8470687

Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերով (ՀՇ 245-71) բազալտների հանքավայրերի համար կիրառելի է երկու կարգավորում՝ 500 մ ՍՊԳ՝ VIII-XI կատեգորիայի ապարների համար, 50 մ ՍՊԳ՝ առանց պայթեցումների քարի արդյունահանման ձեռնարկությունների համար: Բոլոր դեպքերում ՍՊԳ-ն ապահովված է, քանի որ մոտակա բնակավայրը գտնվում է ավելի քան 1.5 կմ հեռավորության վրա:

Տեղամասին հարակից Արամուսի հանքավայրի այլ տեղամասերում կատարված դիտարկումների համաձայն ստորերկրյա ջրերի հորիզոնները իսպառ բացակայում են: Դիտարկումներով պարզվել է ստորերկրյա ջրերի բացակայությունը բոլոր հետախուզական փորվածքներում և շահագործական բացահանքերում, որը բացատրվում է հանքավայրը կազմող ապարների ճեղքավորությամբ և ջրաթափանցելիությամբ: Չեն արձանագրվել նաև ջրհեղեղային հոսքեր: Բացահանքում ջուրը օգտագործվում է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով, ինչպես նաև աշխատողների խմելու կենցաղային կարիքների համար: Ըստ նախնական պայմանավորվածության ջուրը ավտոջրատար մեքենաներով կբերվի Արամուս գյուղի ջրատարից: Համապատասխան պայմանագիրը կկնքվի լիզենցիայի ստացումից հետո՝ մինչև աշխատանքների սկիզբը: Տեխնիկական ջրի աղբյուրը (ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով) կարող է հանդիսանալ Կոտայքի ոռոգման ջրանցքը, որն գտնվում է հանքավայրից մոտ 0.8 -1 կմ հեռավորության վրա: Համապատասխան պայմանագիրը կկնքվի լիզենցիայի ստացումից հետո՝ մինչև աշխատանքների սկիզբը: Հետագայում նաև դիտարկվելու է խորքային հոր օգտագործելու հարցը: Հանքավայրի ջրաերկրաբանական պայմանները բարենպաստ են, գետաջրերը բացակայում են: Բացահանքի տարածքը թափվող մթնոլորտային տեղումները հիմնականում ներծծվում են բացահանքի ճեղքավորված ապարների միջով դեպի խորը հորիզոններ, իսկ մի մասն էլ հեռանում է ինքնահոս կերպով:

Նախատեսվող գործունեության տարածքը խիստ քարքարոտ է և հողաշերտի հզորությունը հայցվող տարածքի մեծ մասում չի գերազանցում միջին 10 սմ: Մակաբացման ապարները՝ արդյունահանմանը զուգընթաց, երբ նախապատրաստվում է լցակույտի տարածքը, տեղափոխվում են լցակույտ: Մակաբացման ապարների հեռացումը կատարվում է բուլդոզեր-էքսկավատոր-ավտոհինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով: Արդյունահանման աշխատանքների ավարտին, ռեկուլտիվացիոն աշխատանքների շրջանակներում, նախատեսվում է լցակույտային ապարները փռել բացահանքի հատակին՝ 10.8 հա մակերեսով: Լցակույտի մակերեսը՝ 1.72 հա: Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 12.52 հա: Ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ գումարը ըստ նախնական հաշվարկների կկազմի՝ 6807.9 հազ.դրամ: Բացահանքի և արտադրական հրապարակի տարածքը գործնականում զուրկ են բերրի հողածածկից, ուստի կենսաբանական ռեկուլտիվացում կատարվելու է լցակույտի տարածքում: Ռեկուլտիվացումը իրականացվելու է

1.72 հա տարածքում խոտածածկի միջոցով: Հաշվարկները կատարվել են կրի, հանքային պարարտանյութի, սերմերի, ոռոգման ջրի, վառելանյութի մոտավոր ծավալների հիման վրա: Կենսաբանական ռեկուլտիվացման ծախսը գնահատվում է 510.0 հազ.դրամ: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 6807900 + 510000 = 7317900 դրամ:

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սակայն Արամուսի բազալտի հանքավայրի Սալմաստ տեղամասի կամ հարակից բնակավայրերի տարածքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան: Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՊՈԱԿ-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց1: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝ փոշի՝ 0.2 մգ/խմ, ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/խմ, ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/խմ, ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/խմ:

Հանքարդյունահանման համար հատկացված տարածքն ունի ամբողջովին վնասված /դեգրադացված/ լանդշաֆտ, որտեղ չեն պահպանվել վայրի բնության ներկայացուցիչները: Նույն իրավիճակն է նաև հանքավայրի մերձակայքում: Հանքավայրը չորս կողմից շրջապատված է այլ հանքերով և ջարդիչ կայանքներով: Տարածքում և մերձակայքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հայտնաբերվել: Անմիջապես հանքավայրի տարածքում և մերձակայքում վայրի կենդանիների ապրելավայրեր չեն հայտնաբերվել: Համաձայն գրականության տվյալների այստեղ չկան ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներ:

Արամուսի բազալտի հանքավայրի անմիջական տարածքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ: Տեղամասի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մակաբացման ապարները, մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերը ու կենցաղային աղբը:

Շահագործման փուլում առաջացող թափոնները ներառում են.

- բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած մակաբացման պարներ՝ 34000100 01 00 0 վտանգավորության դասը՝ V,
- բանեցված շարժիչների յուղերի թափոններ, 0.16 տ/տարի՝ դասիչ՝ 5410020102033 բաղադրությունը՝ պարաֆիններ, սինթետիկ միացություններ, բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում: Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում,
- բանեցված դիզելային յուղեր, 0.3 տ/տարի՝ դասիչ՝ 54100203 02 03 3, բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ, բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում: Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում: Օգտագործված յուղերը ու քսուկները հավաքվում են առանձին

տարրաների մեջ և հանձնվում թափոնների օգտահանմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպություններին,

- բանեցված դողածածկաններ՝ 0.18 տ/տարի, դասիչ՝ 5750020213004 բաղադրությունը՝ ետին, մետաղյա լարեր, բնութագիրը՝ հրդեհավտանգ է: Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում թափոնների օգտահանմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպություններին վաճառելու համար,

- բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, 0.08 կգ/տարի, դասիչ՝ 9211010013012 բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ, թթուներ, պլաստիկ նյութեր, բնութագիրը՝ թունավոր է շրջակա միջավայրի համար: Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում: Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում լիցենզավորված ընկերություններին վաճառելու համար,

- կենցաղային աղբ՝ 9120040001004 (կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) վտանգավորության 4-րդ դաս) պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, ստվարաթուղթը, տեքստիլը, պլաստմասան և այլն: Թափոնների առաջացման նորման 0.3 խմ/տարի 1 մարդու համար: Տեսակարար կշիռը՝ մոտ 0.25 տ/խմ: Ընդամենը՝ 3.6 խմ/տարի: Կենցաղային աղբը հավաքվում է հատուկ տեղադրված աղբամաններում և համապատասխան սանիտարական ծառայության կողմից պարբերաբար տեղափոխվում համայնքի աղբավայր:

Բացահանքի աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը՝

Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ) հանդիսանում է նախատեսվող գործունեության կազմակերպման և իրականացման կարևոր գործիք, այն նախանշում է անհրաժեշտ դիտարկումների, վերահսկման մեխանիզմներ, մեղմացնող միջոցառումներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել հանքի շահագործման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու, մեղմացնելու կամ փոխհատուցելու համար: Պլանում նշվում են հնարավոր ազդեցությունները, դրանց առավել հավանական վայրերը, առաջարկվող մեղմացնող միջոցառումները:

- աշխատանքները կատարել հնարավորինս խոնավ եղանակներին: Չոր եղանակներին ջրել արտադրական հրապարակները,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան կլանիչներ,
- պահեստները պետք է մշտապես վերահսկվեն՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը: Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում,
- շրջակա լանջերից հոսող մակերևույթային ջրերի հոսքը դեպի բացհանքերի խոռոչներ և լցակույտի հատակ կանխարգելելու նպատակով բացհանքերի և լցակույտի պարագծով

անցկացնել խրամներ և առուներ,

- լցակույտի և բացհանքի ամենացածրադիր նիշերից ցածր կառուցել պատվարներ արտահոսող մակերևույթային ջրերի պարզարան – ավազան ստեղծելու նպատակով,
- արդյունաբերական հրապարակից ցածրադիր նիշում կառուցել հոր-պարզարան, բացառել արտահոսքերի դեպի ցածրադիր ռելիեֆ,
- բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս,
- կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում և սննդի ընդունման կետերում՝ կանոնավոր աղբահանում:

ՀՀ կառավարությունը 10 հունվարի 2013 թվականի N 22-Ն որոշումով սահմանել է օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի և մշտադիտարկումների իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի: Մշտադիտարկումների ցանցը, ցանցի առանձին կետերի տեղադիրքը ընտրվում է այնպես, որպեսզի ցանցի կետերում առավելագույն ուժգնությամբ և արագորեն /զգայուն կետեր/ նկատելի լինի էկոլոգիական չափորոշիչների փոփոխությունները: Այդ կետերը ընտրվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս և մնում են անփոփոխ նախաձեռնության ամբողջ ընթացքում և հանքի փակումից հետո մինչև չափորոշիչների ցուցանիշների կայունանալը: Նախաձեռնությունը սկսելուց առաջ հաստատագրված նմուշառման կետերում չափվում են ելակետային էկոլոգիական պարամետրերը և գրանցվում էկոմոնիթորինգի դիտարկումների գրանցամատյանում՝ որպես համեմատական թվեր, նախաձեռնության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար: «Ար-քնսթաքշն» ընկերության բազալտների հանքավայրի Սալմաստ տեղամասի մոնիթորինգը ներառում է օդի որակի, աղմուկի, հողածածկի և մերձակա կենսաբազմազանության վերահսկման ուսումնասիրություն: Քանի որ տեղամասում ջրային ռեսուրսներ չկան, դրանց մոնիթորինգ չի նախատեսվում:

Ընդամենը բնապահպանական և մոնիթորինգի միջոցառումների գումարը կկազմի՝ 2300000 դրամ, այդ թվում նախապատրաստման փուլում՝ 1600000 դրամ, շահագործման փուլում տարեկան 700000 դրամ՝ ներառյալ մոնիթորինգի տարեկան ծախսերը:

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, քաղաքաշինության կոմիտեն: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված

կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտության դեպքում իրականացնել ջրցանի ծավալների ավելացում:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել արտակարգ իրավիճակների, շինարարության և շահագործման ընթացքում հարակից բնակելի տարածքներում առաջացող աղմուկի և թրթռացման մակարդակի, դրանց կանխարգելմանը կամ նվազեցմանը և բացառմանն ուղղված նախատեսվող միջոցառումները:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել հանքաքարի տեղափոխման նպատակով ավտոտրանսպորտի շարժը (մի տարածքից մյուս տարածք/ներ/, կամ համայնքից համայնք տեղափոխող մեքենաների տեսակը, տարողունակությունը, երթերի քանակը) չաղտոտելով շրջակա միջավայրը:
- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջներին և միջոցառումներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Սալմաստ» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան